Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 10-ի N 18 -Ն որոշման

<<Հավելված N 5
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 24 N 1283-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են լիցենզավորված անձանց կողմից «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունների (այսուհետ՝ հաշվետվություններ)՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Լիցենզավորված անձինք հաշվետվությունները կարող են ներկայացնել էլեկտրոնային համակարգով հետևյալ հասցեով՝ www.e-gov.am/licenses-reports:

3. Լիցենզավորված անձինք հաշվետվություններն էլեկտրոնային համակարգով ներկայացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներին և պարբերականությանը համապատասխան:

4. Լիցենզավորված անձը հաշվետվությունների լրացման նպատակով www.e-gov.am կայքի «Լիցենզավորված անձանց հաշվետվությունների ընդունման համակարգ» բաժնում ընտրում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, լիցենզավորված անձի տեսակը և հաշվետվության անվանումը, այնուհետև լրացնում համապատասխան տեղեկատվական

դաշտերը և կցում հաշվետվությունը (XLS կամ XLSX ֆորմատների ֆայլերի տեսքով), որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստորագրված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Հաշվետվությունը լիցենզավորող մարմնում մուտքագրված լինելու փաստը հավաստվում է նույն աշխատանքային օրվա ընթացքում հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր: Լիցենզավորված անձը հաշվետվության ընթացքին կարող է հետևել նշված 12-նիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով:

6. Ներկայացված հաշվետվությունների ստուգման արդյունքում սահմանված ձևերին անհամապատասխանություններ, անճշտություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում լիցենզավորող մարմինը դրա մասին հաշվետվությունը մուտքագրվելուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացնում է լիցենզավորված անձին այն էլեկտրոնային փոստի հասցեով և (կամ) հեռախոսահամարի միջոցով, որը նշված է էլեկտրոնային համակարգում: Տեղեկաց-վելուց հետո հնգօրյա ժամկետում թերությունները վերացնելու և սույն կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան հաշվետվությունը կրկին ներկայացնելու դեպքում այն համարվում է ներկայացված էլեկտրոնային համակարգով սկզբնական ներկայացման օրը: >>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ